ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հոկտեմբերի 2026թ. թիվ 764-Ա

Ս.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ
ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 22.1 մասով և հաշվի առնելով Ս.Նալբանդյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արմանիսի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Սերինե Նալբանդյանին տրամադրել 2026-2027թթ. աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մի մասը 2026 թվականի նոյեմբերի 2-ից 20-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր:

2. Ս.Նալբանդյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի նոյեմբերի 23-ից:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

Կից գրությամբ սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ս.Նալբանդյանի պարտականությունները կատարող նշանակելու համար:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-10-30 17:19:10 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 30
ք.Վանաձոր